ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պատրաստված է՝

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ» ՍՊԸ կողմից

© All rights reserved by Heiko Maniero.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շրջանակը 4

2. Նորմատիվ վկայակոչումները 5

3. Հասակացություններ և սահմանումներ 5

4. Անկողմանակալություն 7

4.1 Ընդհանուր դրույթներ 7

4.2 Անկողմանկալության սկզբունքներ 7

4.3 Անկողմնակալության դրսևորումները 8

5. Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալության հանձնաժողով 10

5.1 Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարության և անձնակազի անկողմանկալության պարտավորությունը 10

5.2. Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալության պարտավորությունը 11

6. Անկողմնակալության սպառնալիքները 14

6.1 Սպառնալիքների սահմանումը 14

6.2 Բնորոշ սպառնալիքներ 14

7. Անկողմնակալության ռիսկերի որոշումը և անվտանգության միջոցառումները 16

7.1 Ընդհանուր դրույթներ 16

7.2 Ռիսկի մակարդակի գնահատում 17

7.3 Անվտանգության երաշխիքներ 18

8.Անկողմնակալության հանձնաժողով 19

8.1 Ընդհանուր դրույթներ 19

8.2 Անկողմնակալության հանձնաժողովի պարտականությունները 20

8.3 Անկողմնակալության հանձնաժողովի կազմը 22

8.4 Գլխավոր գործադիր տնօրենի դերը Անկողմնակալության հանձնաժողովում 24

8.5 Անկողմնակալության հանձնաժողովի անդամների պարտականությունները 24

8.6 Անկողմնակալության հանձնաժողովի հատուկ պարտականությունները 25

8.7 Անկողմնակալության հանձնաժողովի նիստերը 25

9. Սերտիֆիկացման գործընթացի դադարեցում կամ կասեցում 26

© All rights reserved by Heiko Maniero.

10. Քաղաքականության շահագրգիռ կողմերի հետ կապը 26

© All rights reserved by Heiko Maniero.

1. Շրջանակը

1.1 Երրորդ կողմի սերտիֆիկացման ընդհանուր նպատակն է վստահություն տալ սերտիֆիկացման ապավինող բոլոր կողմերին և սերտիֆիկացման գործընթացում ապահովել հավաստագրված ծառայությունների անկախ վերահսկողություն: Սերտիֆիկացման նկատմամբ վստահություն ձեռք բերելու սկզբունքներն են անկախությունը, անաչառությունն ու կոմպետենտությունը, ինչպես գործողություններում, այնպես էլ արտաքին տեսքի մեջ: Հետևաբար, անկողմնակալությունը, անկախությունն ու կոմպետենտությունն արդյունավետ և հետևողական սերտիֆիկացման գործընթաց իրականացնելու հիմնական նախապայմաններն են: Այն դեպքում, երբ այս փաստաթղթում օգտագործվում է «պետք է» բառը, այն կարող է նշանակել նաև «անել» կամ «անում է»՝ կախված կիրառվող ստանդարտի և (կամ) ISO նորմայի հիմքում ընկած մտադրությունից:

1.2 Անկողմնակալությունը ենթադրում է անկախության և օբյեկտիվության առկայություն, ինչը նշանակում է, որ շահերի բախում չկա կամ այն լուծվում է այնպես, որ չի կարող բացասական ազդեցություն ունենալ Սերտիֆիկացման մարմնի գործունեության և սերտիֆիկացման գործընթացի վրա:

1.3 Սերտիֆիկացման գործընթացում անկողմնակալության նպատակներն ու պահանջները իրացվում են սույն քաղաքականության կանոնների, ընթացակարգերի և սկզբունքների կիրառմամբ, մասնավորապես անկողմնակալության ռիսկի գնահատման, սպառնալիքների և պաշտպանության միջոցների որոշման և բացահայտման կանոնների և ընթացակարգերի միջոցով:

1.4 Սույն քաղաքականության դրույթները, գործող միջազգային ստանդարտները և անկողմնակալության պահանջներ սահմանող օրենքները կիրառվում են Սերտիֆիկացման մարմնի կողմից իրականացվող յուրաքանչյուր սերտիֆիկացման գործընթացում:

© All rights reserved by Heiko Maniero.

2. Նորմատիվ վկայակոչումները

2. 1 Սերտիֆիկացման մարմինն իրականացնում է գործունեություն պետական և միջազգային օրենքներին, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմիններին ներկայացվող միջազգային ստանդարտներին համապատասխան: Սերտիֆիկացման մարմինների կառավարման համակարգերի սկզբունքները սահմանվում են հետևյալ ստանդարտներով՝

ա) Կառավարման համակարգերի համապատասխանությունը գնահատող սերտիֆիկացման մարմինների անկողմանակալության պահանջները սահմանվում են ISO 17021-ի հոդված 4.2-ում և հոդված 5.2-ում

բ) Սերտիֆիկացման մարմինների սերտիֆիկացման անձնակազմի անկողմնակալության պահանջները սահմանվում են ISO 17021-ի հոդված 4.2-ում:

2. 2 Վկայակոչված փաստաթղթերը և կետերը անհրաժեշտ են սույն փաստաթղթի կիրարկման առումով: Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ (ներառյալ ցանկացած փոփոխություն):

2. 3 Վկայակոչված ISO ստանդարտներով և գործող օրենսդրությամբ նախատեսված այլ կանոններ ընկերության կողմից ներկայացված են իրավաբանորեն պարտադիր այլ փաստաթղթերում, որոնք նպատակ ունեն ընդլայնել ընկերության, պատվիրատուների իրավունքների պաշտպանության և համապատասխանության գնահատման գործընթացի ամբողջականության շրջանակները:

3. Հասակացություններ և սահմանումներ

Սույն փաստաթղթի շրջանակներում օգտագործվում են հետևյալ հասկացությունները և սահմանումները՝

3.1 Պատվիրատու՝

© All rights reserved by Heiko Maniero.

Սերտիֆիկացման մարմնի առջև սերտիֆիկացման պահանջների՝ ներառյալ արտադրանքի, գործընթացի, ծառայության և/կամ կառավարման համակարգի պահանջների կատարումը ապահովելու համար պատասխանատու կազմակերպություն կամ անձ: «Պատվիրատու» հասկացությունը վերաբերում է ինչպես «Հայտատուին», այնպես էլ «Պատվիրատուին», եթե այլ բան նախատեսված չէ:

3.2 Սերտիֆիկացման մարմին

Սերտիֆիկացման մարմինը համապատասխանության գնահատման մարմին է, որը գործում է սերտիֆիկացման սխեմաներով, սերտիֆիկացնում կառավարման համակարգերը և թողարկում է սերտիֆիկատներ: Սույն փաստաթղթում հասկացությունը վերաբերվում է **«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ» ՍՊԸ-ին՝** Աջափնյակ, Նորաշեն 25, կոմերցիոն տարածք 141, 0097, Երևան, Հայաստանի Հանրապետություն

3.3 Սերտիֆիկացման գործընթաց

Սերտիֆիկացման մարմնի կամ Պատվիրատուի կողմից սերտիֆիկացման գործընթացի ժամանակ ձեռնարկված փոխկապակցված կամ փոխգործակցող գործողությունների ամբողջություն:

3.4 Անկողմանակալություն

Լայն իմաստով օբյեկտիվության առկայություն:

3.5 Անձնակազմ

Սերտիֆիկացման մարմնի ցանկացած ներքին կամ արտաքին աշխատակից:

3.6 Աուդիտոր

Սերտիֆիկացման մարմնի ներքին կամ արտաքին աշխատակից, որը մասնակցում է սերտիֆիկացման գործընթացին՝ կատարելով գնահատումներ կամ աուդիտներ:

© All rights reserved by Heiko Maniero.

4. Անկողմանակալություն

4.1 Ընդհանուր դրույթներ

4.1.1 Սերտիֆիկացման մարմինը անկողմնակալ ձևով իրականացնում է սերտիֆիկացման գործողություններ և ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ անկողմնակալությունն ապահովելու համար:

4.1.2 Սերտիֆիկացման մարմինը պետք է անկախ լինի այնքանով, որքանով դա պահանջվում է՝ կախված այն պայմաններից, որոնցում նա մատուցում է իր ծառայությունները:

4.1.3 Սերտիֆիկացման մարմնի կառուցվածքը պետք է լինի այնպիսին, որը հնարավորություն տա շահագրգիռ կողմերի մասնակցությանը Անկողմնակալության հանձնաժողովին կամ անաչառության պահպանման այլ մեխանիզմներին:

4.1.4 Անձնակազմի կամ այլ անձանց, մարմինների կամ կազմակերպությունների գործողություններից բխող անկողմնակալության ռիսկերի հետ կապված ցանկացած հարցի դեպքում Սերտիֆիկացման մարմինը գործում է առանց հապաղման՝ այդ գործողությունների մասին տեղեկանալուն պես:

4.2 Անկողմանկալության սկզբունքներ

4.2.1 Սերտիֆիկացման ծառայությունների անկողմանկալությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

ա) **Շահերի բախման կանխում**. Շահերի բախումը մի իրավիճակն է, որը կարող է խարխլել սերտիֆիկացման գործընթացի անկողմնակալությունը՝ Սերտիֆիկացման մարմնի շահի հետ սերտիֆիկացման դիմող կազմակերպությունների շահերի և հանրային շահերի անհամաձայնությունների, բախումների հնարավորության պատճառով: Շահերի բախումը կարող է առաջանալ նաև Սերտիֆիկացման մարմնի անունից սերտիֆիկացման գործընթացին

© All rights reserved by Heiko Maniero.

մասնակցող անհատ անձի (աշխատողի, արտաքին խորհրդատուի և այլնի) մասնավոր և մասնագիտական շահի բախման արդյունքում:

բ) **Գաղտնիություն.** Գաղտնիությունը սերտիֆիկացման գործընթացի անկողմնակալությունը պահպանելու հիմնական նախադրյալներից մեկն է: Գաղտնիության բացակայությունը կարող է վտանգել սերտիֆիկացման գործընթացը կամ վնաս պատճառել թե՛ Սերտիֆիկացման մարմնին, թե՛ Պատվիրատուին: Սերտիֆիկացման մարմինը երաշխավորում է գաղտնիությունը և իր ներքին ու արտաքին անձնակազմի հետ պայմանագրային հիմունքներով ապահովում է սերտիֆիկացման գործընթացների և պատվիրատուների գաղտնիության պահպանումը:

գ) **Արտաքին մասնագիտական գործունեության անկախություն և սահմանափակում**. Սերտիֆիկացման գործընթացում ընդգրկված բոլոր ներքին և արտաքին աշխատակիցները և Սերտիֆիկացման մարմինը՝ որպես սուբյեկտ, Սերտիֆիկացման գործընթացի ընթացքում գործում են անկախության սզբունքով: Անկախությունը մեծապես կապված է անձնակազմի արտաքին մասնագիտական գործունեության սահմանափակման և Սերտիֆիկացման մարմնից սերտիֆիկացում պահանջող սուբյեկտի հետ հնարավոր հարաբերությունների հետ:

դ) **Բացության սկզբունք.** Սերտիֆիկացման ծառայությունները Սերտիֆիկացման մարմինը մատուցում է բաց լինելու սկզբունքով, ինչը նշանակում է, որ սերտիֆիկացման ծառայություններ մատուցվում են՝ անկախ սերտիֆիկացվող կազմակերպությունների չափից, տեսակից և գործունեության տնտեսական ոլորտից: Այնպիսի գործոններ, ինչպիսիք են խորհրդատվական կամ ֆինանսական կազմակերպությունները, որոնք օգտագործվում են սերտիֆիկացման համար, չպետք է ազդեն սերտիֆիկացման գործընթացի վրա՝ ժամանակի, գնի, պարզության կամ բարդության կամ որևէ այլ առումով:

4.3 Անկողմնակալության դրսևորումները

4.3.1 Անկողմանակալությունը կարող է դրսևորվել որպես ֆինանսական, գործառնական, ներքին և արտաքին անկողմանակալություն:

4.3.2 Ֆինանսական անկողմնակալությունը նշանակում է՝

© All rights reserved by Heiko Maniero.

ա) Սերտիֆիկացման մարմինը եկամուտ է ձևավորում՝ գանձելով որոշակի գումար սերտիֆիկացման ծառայությունների դիմաց: Սերտիֆիկացման գործունեություն սկսելու համար կարող է անհրաժեշտ լինել նախնական ֆինանսավորում: Նախնական ֆինանսավորումը պետք է տրամադրվի Սերտիֆիկացման մարմին բաժնետերերի կողմից:

բ) սերտիֆիկացման գործողությունները կախված չեն և ոչ էլ ֆինանսավորվում են երրորդ անձանցից: Դրանք ֆինանսավորվում են բացառապես Սերտիֆիկացման մարմնի բաժնետերերի կողմից, ինչը Սերտիֆիկացման մարմինը անկախ է դարձնում ցանկացած սերտիֆիկացվող պատվիրատուից կամ սերտիֆկացման գործընթացում ինչ-որ կերպ հետաքրքրված երրորդ անձանցից:

գ) Ֆինանսական անկողմնակալության սպառնալիքներից մի քանիսը սպառնալիքներ են, որոնք կապված են սեփական շահերի և սեփական աշխատանքը ստուգելու, ֆինանսական կամ այլ շահերի բախման հետ, ինչպիսիք են պատվիրատուի ուղղակի կամ անուղղակի շահերը, Պատվիրատուի վճարներից չափազանց մեծ կախվածությունը, Պատվիրատուին կորցնելու վախը, կապը աշխատավարձի և պայմանագրային աշխատանքների քանակի/արդյունքների միջև:

4.3.3 Օպերատիվ անկողմնակալություն նշանակում է, որ սերտիֆիկացման գործողությունները չպետք է կապված լինեն այլ կազմակերպությունների, գործողությունների կամ ծառայությունների հետ, որոնք կարող են ազդել անաչառության վրա, օրինակ. ընդհանուր գների, շուկայավարման, վաճառքի կամ գնումների միջոցով:

4.3.4 Ներքին անկողմնակալությունը ներառում է Սերտիֆիկացման մարմնի տարբեր գործառույթներ և դրանց տարանջատման եղանակ, որպեսզի չվնասի կամ չվտանգի սերտիֆիկացման անաչառությունը:

4.3.5 Արտաքին անկողմնակալությունը ներառում է կազմակերպությունից դուրս այլ գործողությունների կատարումը (խորհրդատվական ծառայությունների մատուցում, տեխնիկական փաստաթղթերի կազմում, արտադրություն, գնում, տեղադրում, սպասարկում,

© All rights reserved by Heiko Maniero.

սեփականություն և այլն), որոնք կարող են ազդել կամ վտանգել սերտիֆիկացման անաչառությունը:

5. Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալության հանձնաժողով

5.1 Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարության և անձնակազի անկողմանկալության պարտավորությունը

5.1.1 Սերտիֆիկացման մարմինը իրականացնում է իր բիզնեսի գործունեությունը՝ հիմնվելով ամբողջականության և անկողմնակալության բարձրագույն սկզբունքների վրա՝ ապահովելով անաչառության ցանկացած ռիսկի վերացում կամ մեղմացում:

5.1.2 Սերտիֆիկացման մարմինը, նրա բարձրաստիճան ղեկավարությունը, կոմիտեները և անձնակազմը պարտավորվում են ապահովել անաչառության սկզբունքների և պահանջների կատարումը և պետք է իրենց աշխատանքային պարտավորությունները կատարելիս գործեն այնպես, որ ապահովեն անկողմնակալության ռիսկերի վերացումը կամ մեղմացումը:

5.1.3 Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարության անկողմնակալության հանձնառությունը ներառում է (բայց չի սահմանափակվում) անաչառության քաղաքականության, պահանջների, ընթացակարգերի և կանոնների մշակում և վերահսկում, և քաղաքականության, պահանջների, ընթացակարգերի և կանոնների խախտման դեպքում համարժեք գործողությունների իրականացում:

5.1.4 Սերտիֆիկացման մարմինը ի վիճակի է ցույց տալ, որ բարձրաստիճան ղեկավարության և անձնակազմի նկատմամբ անաչառության պահանջները սահմանվել են՝ ելնելով նրա բոլոր գործընթացներից, ներառյալ՝ արտաքին աշխատողները և համապատասխան արտապատվիված գործողությունները:

5.1.5 Սերտիֆիկացման մարմինը լրացուցիչ ապահովում է իր բարձրաստիճան ղեկավարության և ներքին ու արտաքին անձնակազմի հավատարմությունը սույն քաղաքականության մեջ ներկայացված անկողմնակալության պահանջներին՝ պահանջելով

© All rights reserved by Heiko Maniero.

ստորագրել Անկողմնալության և Գաղտնիության մասին հայտարարություն, որում նրանք հաստատում են, որ լիովին տեղյակ են և հավատարիմ են Սերտիֆիկացման մարմնի Անկողմնակալության քաղաքականությանը և սերտիֆիկացման գործընթացում գործելու են անաչառ և անկախ, ըստ իրենց լավագույն գիտելիքների:

5.2. Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալության պարտավորությունը

5.2.1 Սերտիֆիկացման մարմինը շարունակաբար բացահայտում է անկողմնակալության ռիսկերը, որոնք բխում են իր գործունեությունից, հարաբերություններից կամ իր անձնակազմի հարաբերություններից և ապահովում է, որ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին անձնակազմը և/կամ հանձնաժողովները, որոնք կարող են ազդել սերտիֆիկացման գործունեության վրա, գործեն ելնելով անկողմնակալության սկզբունքից: Հարաբերություն ասելով հասկանում ենք անձնական, մասնագիտական, կառավարչական, սեփականության, պայմանագրային, ֆինանսական կամ ցանկացած այլ հարաբերություն, որը վտանգում է Սերտիֆիկացման մարմնի կամ նրա անձնակազմի անկողմնակալությունը, հետեւաբար՝ սերտիֆիկացման գործընթացի անաչառությունը:

5.2.2 Սերտիֆիկացման մարմինը պետք է բացառի ֆինանասական, առևտրային և այլ տեսակի ճնշումներ, որոնք կարող են վտանգել անկողմնակալությունը:

5.2.3 Սերտիֆիկացման մարմնի ծառայությունները չպետք է շուկայահանվեն և առաջարկվեն՝ դրանք կապելով կազմակերպության գործունեության հետ, որը խորհրդատվություն է տրամադրում սերտիֆիկացված կամ սերտիֆիկացման ենթակա ապրանքների, ծառայությունների կամ գործընթացների առնչությամբ, և ոչ էլ Սերտիֆիկացման մարմինը պետք է հայտարարի կամ ակնարկի, որ սերտիֆիկացումն ավելի պարզ, հեշտ, արագ, պակաս թանկ կլինի կամ որևէ այլ առավելություն կառաջարկվի, եթե պատվիրատուն դիմի որոշակի մատնանշված խորհրդատվական կազմակերպության:

5.2.4 Սույնով Սերտիֆիկացման մարմինը ներկայացնում և երաշխավորում է, որ չպետք է.

ա) լինի հավաստագրվող արտադրանքի նախագծող, արտադրող, տեղադրող, բաշխող կամ սպասարկող,

© All rights reserved by Heiko Maniero.

բ) լինի հավաստագրվող գործընթացի նախագծող, իրականացնող, շահագործող կամ սպասարկող,

գ) լինի հավաստագրվող ծառայության նախագծող, իրականացնող, շահագործող կամ սպասարկող,

դ) առաջարկի և տրամադրի խորհրդատվություն իր պատվիրատուներին,

ե) առաջարկի և տրամադրի կառավարման համակարգի վերաբերյալ խորհրդատվություն կամ ներքին աուդիտ իր պատվիրատուներին, երբ Սերտիֆիկացման սխեման պահանջում է պատվիրատուի կառավարման համակարգի գնահատում:

զ) Սերտիֆիկացման մարմինը և նույն իրավաբանական անձի որևէ մասը և Սերտիֆիկացման մարմնի կազմակերպության վերահասկողության ենթակայության ցանկացած կազմակերպություն չպետք է առաջարկի կամ իրականացնի իր կողմից սերտիֆիկացված կազմակերպությունների կառավարման համակարգի խորհրդատվություն: Եթե կառավարման համակարգի խորհրդատվությունը իրականացրել է Սերտիֆիկացման մարմինը, ապա դրա ավարտից հետո նվազագույնը երկու տարվա ընթացքում Սերտիֆիկացման մարմինը չպետք է իրականացնի նույն կառավարման համակարգի սերտիֆիկացում:

է) Սերտիֆիկացման մարմինը չպետք է իրականացնի իր ոլորտով այլ Սերտիֆիկացման մարմնի կառավարման համակարգի սերտիֆիկացում:

ը) Սերտիֆիկացման մարմինը առնվազն 2 տարի չպետք է իրականացնի կառավարման համակարգի սերտիֆիկացում, որի վերաբերյալ իր հետ փոխհարաբերություն ունեցող խորհրդատվական կազմակերպությունը տրամադրել է խորհրդատվություն Սերտիֆիկացման մարմնի պատվիրատունին:

5.2.5 Սերտիֆիկացման մարմինը հայտարարում և երաշխավորում է, որ Սերտիֆիկացման մարմնի հետ կապված առանձին իրավաբանական անձանց գործունեությունը, որոնք հիմնված են սեփականության, կառավարման, անձնակազմի, ընդհանուր ռեսուրսների, ֆինանսների,

© All rights reserved by Heiko Maniero.

պայմանագրերի և այլնի վրա, չեն խաթարում իր սերտիֆիկացման գործունեության անկողմնակալությունը, և որ այս քաղաքականությունը լիովին կիրառելի է նաև այս հարաբերությունների համար:

5.2.6 Սերտիֆիկացման մարմինը հայտարարում և երաշխավորում է, որ Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարությունը և անձնակազմը վերանայման և սերտիֆիկացման որոշումների կայացման գործընթացում չեն մասնակցում հարակից առանձին իրավաբանական անձի նույն կամ նմանատիպ գործողություններին, ոչ էլ այլ առանձին իրավաբանական անձի բարձրաստիճան ղեկավարությունը կամ անձնակազմը պետք է ներգրավված լինեն Սերտիֆիկացման մարմնի կառավարման, վերանայման կամ սերտիֆիկացման որոշումների կայացման գործընթացում:

5.2.7 Սերտիֆիկացվող արտադրանքի, ծառայության, գործընթացի կամ կառավարման համակարգի վերաբերյալ խորհրդատվությանը մասնակցած անձնակազմը չպետք է մասնակցի արտադրանքի, ծառայության, գործընթացի կամ կառավարման համակարգի վերանայմանը կամ սերտիֆիկացման որոշում կայացնի խորհրդատվությունը տրամադրելուց հետո 2 տարի ժամկետով:

5.2.8 Սերտիֆիկացման մարմինը սերտիֆիկացման ծառայություններ է մատուցում անկախ Պատվիրատուի չափից, տեսակից և տնտեսական գործունեության ոլորտից:

5.2.9 Գործոնները, ինչպիսիք են խորհրդատվական կազմակերպությունները կամ սերտիֆիկացման համար օգտագործվող ֆինանսական կազմակերպությունները, չեն ազդի սերտիֆիկացման գործընթացի վրա՝ ժամանակի, գնի, պարզության կամ բարդության կամ որևէ այլ առումով:

© All rights reserved by Heiko Maniero.

6. Անկողմնակալության սպառնալիքները

6.1 Սպառնալիքների սահմանումը

6.1.1 Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալության սպառնալիքները հավանական կողմնակալության աղբյուրներ են, որոնք կարող են փոխզիջման ենթարկել կամ ողջամտորեն ակնկալվում է, որ կխաթարեն Սերտիֆիկացման մարմնի կամ դրա արտաքին կամ ներքին անձնակազմի օբյեկտիվությունը և անկողմնակալ սերտիֆիկացման ընթացակարգեր վարելու ունակությունը:

6.1.2 Ակնկալվում է, որ անկողմնակալության սպառնալիքները խաթարելու են Սերտիֆիկացման մարմնի վերաքաղիծը՝ Սերտիֆիկացման հայտերի վերաբերյալ անաչառ որոշումներ կայացնելու առումով:

6.2 Բնորոշ սպառնալիքներ

6.2.1 Սպառնալիքի աղբյուր կարող են լինել գործունեության տարբեր տեսակները, փոխհարաբերությունները և սերտիֆիկացման գործընթացի ամբողջականության վրա ազդող այլ հանգամանքները: Սպառնալիքների բնույթը և դրանց հնարավոր ազդեցությունը Սերտիֆիկացման մարմնի և նրա անձնակազմի անաչառության վրա հասկանալու համար, Սերտիֆիկացման մարմինը պետք է նույնականացնի սպառնալիքների տեսակները, որոնք առաջացնում են հատուկ գործողություններ, որոշակի հարաբերություններ կամ այլ հանգամանքներ:

6.2.2 Սերտիֆիկացման գործընթացի ընթացքում անկողմնակալության առավել բնորոշ սպառնալիքները ներառում են, բայց չեն սահմանափակվում, հետևյալ ռիսկերով.

ա) Անձնական շահերի սպառնալիքներ՝ Սերտիֆիկացման մարմնի անձնակազմի կամ Սերտիֆիկացման մարմնի կողմից իրենց շահերից բխող սպառնալիքներ են, և դրանք կարող են ներառել, օրինակ, հուզական, ֆինանսական կամ այլ անձնական շահեր:

© All rights reserved by Heiko Maniero.

բ) Ինքնաստուգման սպառնալիքներ՝ սպառնալիքներն են, որոնք առաջանում են, երբ Սերտիֆիկացնող մարմնի կամ դրա անձնակազմը վերանայում է իրենց կողմից կատարված աշխատանքը: Հետևաբար, ինքնաստուգման սպառնալիք կարող է առաջանալ, երբ Սերտիֆիկացնող մարմնի և դրա անձնակազմը վերանայի իրենց կայացրած վճիռներն ու որոշումները: Ինքնաստուգման սպառնալիք կառաջանա, եթե Սերտիֆիկացնող մարմինը հավաստագրի այն ապրանքը, ծառայությունը կամ գործընթացը, որի համար նախկինում խորհրդատվություն է տրամադրել:

գ) Ծանոթության կամ վստահության սպառնալիքներն այն սպառնալիքներն են, որոնք առաջանում են աուդիտորների կողմից սերտիֆիկացում պահանջող Պատվիրատուի հետ սերտ հարաբերությունների ազդեցությամբ: Նման սպառնալիք առկա է, եթե Սերտիֆիկացման մարմնի անձնակազմը բավականաչափ թերահավատորեն չի վերաբերվում Պատվիրատուի պնդումներին և, որպես արդյունք, չափազանց հեշտությամբ ընդունում է Պատվիրատուի տեսակետը՝ Պատվիրատուին ծանոթ լինելու կամ վստահելու պատճառով: Օրինակ, ծանոթության սպառնալիք կառաջանա, եթե Սերտիֆիկացման մարմինը կամ նրա անձնակազմը Պատվիրատուի հետ ունենան առանձնակի սերտ կամ երկարատև անձնական կամ մասնագիտական հարաբերություններ:

դ) Ահաբեկման սպառնալիքներն այն սպառնալիքներն են, որոնք առաջանում են Սերտիֆիկացման մարմնի անձնակազմը հավատում է կամ ենթարկվում է սերտիֆիկացում պահանջող Պատվիրատուի կամ այլ շահագրգիռ անձանց կողմից բացահայտ կամ գաղտնի հարկադրանքի:

ե) Մրցակցության սպառնալիքները կարող է առաջանալ, օրինակ, երբ պայմանագրային արտաքին աշխատողը միաժամանակ աշխատում է կամ այլ կերպ է համագործակցում է Հավաստագրում պահանջող Պատվիրատուի անմիջական մրցակցի հետ:

զ) Ֆինանսական սպառնալիքներն առաջանում են, եթե Սերտիֆիկացնող մարմնի եկամտի աղբյուրն անկողմնակալության սպառնալիք է:

© All rights reserved by Heiko Maniero.

7. Անկողմնակալության ռիսկերի որոշումը և անվտանգության միջոցառումները

7.1 Ընդհանուր դրույթներ

7.1.1 Անկողմնակալության գնահատման հիմնական սկզբունքը Սերտիֆիկացման մարմնի կողմից իրականացվող ռիսկերի նույնականացումն ու վերլուծությունն է:

7.1.2 Սերտիֆիկացման մարմինը երաշխավորում է, որ անկողմնակալության բոլոր ռիսկերը մշտապես վերահսկվում են, և դրանք կարող են առաջանալ իր գործունեության և հարաբերությունների կամ իր աշխատակազմի հարաբերությունների փոփոխության արդյունքում:

7.1.3 Ռիսկերի գնահատումն ամբողջ կազմակերպության համար իրականացվում է տարին մեկ անգամ, կամ ավելի հաճախ, եթե առկա են մտահոգություններ կամ սպառնալիքներ:

7.1.4 Սերտիֆիկացման մարմինը իրականացնում է ռիսկերի գնահատում՝ որոշելու ռիսկերը և մեղմացնող միջոցառումները:

7.1.5 Անկողմնակալության ռիսկի վերլուծությունը պետք է իրականացվի կազմակերպության մակարդակով՝ սկսած անհատական մակարդակներից (այլ առաջադրանքներ, հետաքրքրություններ և այլն) մինչև գործառնական մակարդակ (անկողմնակալություն պահանջող այլ առաջադրանքների և գործողությունների միջև կապը):

7.1.6 Եթե հայտնաբերվում են որևէ ռիսկեր, որոնք պահանջում են անվտանգության միջոցառումների ձեռնարկում, դրանք ուղարկվում են Անկողմանակլության հանձնաժողովի անդամներին՝ հաջորդ նիստում դիտարկելման համար:

7.1.8 Ռիսկերը նույնականացնելուց հետո անհրաժեշտ է պարզել, թե արդյոք անկողմնակալության ռիսկը կարելի է համարել թույլատրելի կամ անթույլատրելի:

7.1.9 Եթե անկողմնակալության ռիսկը համարվի անթույլատրելի, միջոցառումներ կձեռնարկվեն՝ ռիսկը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու համար:

© All rights reserved by Heiko Maniero.

7.1.10 Եթե վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ռիսկը վերացնելու կամ ռիսկը նվազեցնելու համար, գործողությունների վերաբերյալ որոշում է կայացվում և սկսվում է դրանց իրականացումը:

7.1.11 Անկողմնակալության ռիսկերի նույնականացման, դրանց վերլուծության և դրա հիման վրա կայացված որոշումների հետ կապված բոլոր գործողությունները պետք է փաստաթղթավորվեն:

7.1.12 Անկողմնակալության ռիսկերի հետ կապված բոլոր տեղեկությունները և վերլուծությունները պետք է հասանելի լինեն Անկողմնակալության հանձնաժողովին:

7.2 Ռիսկի մակարդակի գնահատում

7.2.1 Սերտիֆիկացման մարմինը գնահատում է անկողմնակալության ռիսկի մակարդակը:

7.2.2 Տարբեր գործողություններից, փոխհարաբերություններից կամ այլ հանգամանքներից բխող անկողմնակալության ռիսկի մակարդակը պետք է գնահատվի՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) անկողմնակալության սպառնալիքների տեսակները և նշանակալիությունը,

բ) անվտագության երաշխիքների տեսակները և արդյունավետությունը:

7.2.3 Անկողմանակալության ռիսկի մակարդակը պետք է արտահայտվի՝ «Ոչ մի ռիսկ»-ից «Շատ բարձր ռիսկ» սանդղակով: Ռիսկերի ամբողջական սանդղակը պետք է լինի հետևյալը.

	Ռիսկերի աստիճանավորում	Ռիսկի նկարագրություն
1.	Ոչ մի ռիսկ	Անհնար է խաթարել անկողմնակալությունը
2.	Ցածր ռիսկ	Հավանական չէ խաթարել անկողմնակալու-թյունը
3.	Միջին ռիսկ	Հնարավոր է խաթարել անկողմնակալու-թյունը
4.	Բարձր ռիսկ	Հավանական է խաթարել անկողմնակալու-թյունը

© All rights reserved by Heiko Maniero.

5.	Շատ բարձր ռիսկ	Շատ հավանական է խաթարել անկողմնակալությունը

7.2.4 Անկողմնակալության ռիսկի մակարդակի և ընդունելիության գնահատման ընթացքում Սերտիֆիկացման մարմինը պետք է գնահատի ռիսկը, որը բխում է որոշակի գործողություններից, փոխհարաբերություններից և այլ հանգամանքներից՝ իր լավագույն գիտելիքների համաձայն:

7.2.5 Անկողմնակալության ռիսկի մակարդակը և թույլատրելիությունը հնարավոր չէ ճշգրիտ չափել: Անկողմնակալության ռիսկի մակարդակի և թույլատրելիության գնահատումը ներկայացնում է գնահատումը՝ համաձայն Սերտիֆիկացման մարմնի և գնահատողի (ներ) ի լավագույն գիտելիքների:

7.3 Անվտանգության երաշխիքներ

7.3.1 Ռիսկերը գնահատելուց հետո Սերտիֆիկացման մարմինը պետք է որոշի, թե ինչպիսի անվտանգության երաշխիքներն են անհրաժեշտ անաչառության սպառնալիքները վերացնելու կամ համարժեքորեն մեղմելու համար:

7.3.2 Սերտիֆիկացման մարմինը որոշում կկայացնի համապատասխան անվտանգության երաշխիքների վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ աուդիտորի անկողմնալության սպառնալիքները կարող են ազդել միայն անձի կամ խմբի, բայց ոչ պարտադիր բոլոր աշխատողների վրա: Անվտանգության երաշխիքները կարող են տարբեր լինել անհատի կամ խմբի համար՝ կախված սերտիֆիկացման գործընթացում նրանց դերից:

7.3.3 Սերտիֆիկացման մարմինը պետք է ապահովի, որպեսզի լրացուցիչ երաշխիքներ սահմանելով անկողմնակալության ռիսկի նվազեցման արդյունքում ստացված օգուտները գերազանցեն այդ երաշխիքներ սահմանելու ծախսերը:

7.3.4 Չնայած օգուտները ու ծախսերը հաճախ դժվար է նույնականացնել և քանակապես գնահատել, Սերտիֆիկացման մարմինը պետք է դրանք հաշվի առնի, երբ որոշում է կայացնում անկողմնակալության հարցերի առնչությամբ:

© All rights reserved by Heiko Maniero.

7.3.5 Սերտիֆիկացման մարմինը կարող է ձեռնարկել հետևյալ անվտանգության երաշխիքները

ա) արգելել այնպիսի գործողություններ, որոնց իրականացումը ակնհայտորեն վտանգում են անկողմնակալությունը,

բ) սահմանափակել այն գործողությունները, որոնք պետք է իրականացվեն սահմանափակ կերպով՝ հստակ սահմանված հսկիչ կետերով՝ մեղմացում ապահովելու համար,

գ) տեղեկատվության բացահայտում,

դ) ձեռնարկել ցանկացած այլ երաշխիքային միջոցներ, որոնք Սերտիֆիկացման մարմինը նպատակահարմար է համարում կիրառել անկողմնակալության սպառնալիքները մեղմացնելու կամ վերացնելու նպատակով, ներառյալ (բայց չսահմանափակելով)՝ Անկողմնակալության հանձնաժողովի առաջարկությունները, քաղաքականությունը, ընթացակարգերը, պրակտիկան, ստանդարտները, կանոնները, ինստիտուցիոնալ պայմանավորվածությունները և այլն:

7.3.6 Սերտիֆիկացման մարմնի անունից անվտանգության երաշխիքների մասին որոշումը կայացնում է Գլխավոր գործադիր տնօրենը (Գործադիր տնօրեն) կամ Գործադիր տնօրենի կողմից լիազորված այլ անձ կամ հանձնաժողով:

8.Անկողմնակալության հանձնաժողով

8.1 Ընդհանուր դրույթներ

8.1.1 Անկողմնակալության հանձնաժողովը նշանակվում է ապահովելու Սերտիֆիկացման մարմնի և նրա անձնակազմի քաղաքականության, գործելակերպի և գործողությունների համապատասխանությունը սույն քաղաքականությանը և ISO ստանդարտների համապատասխան անաչառության դրույթներին:

© All rights reserved by Heiko Maniero.

8.1.2 Անկողմնակալության հանձնաժողովը նախ և առաջ պատասխանատու է Սերտիֆիկացման մարմնում որոշումների կայացման գործընթացների անաչառությունը վերահսկելու համար:

8.1.3 Անկողմնակալության հանձնաժողովն ապահովում է սերտիֆիկացման գործողությունների որակի անկախ վերանայում և վերահսկում:

8.1.4 Այն պետք է հնարավորություն տա շահագրգիռ կողմերին արդյունավետ ներգրավվել անկողմնակալության երաշխավորմանը և պահպանել շահերի հավասարակշռությունը, որպեսզի որևէ մի շահ չգերակշռի:

8.2 Անկողմնակալության հանձնաժողովի պարտականությունները

8.2.1 Հանձնաժողովի ձևավորման հիմնական նպատակը կազմակերպության այլ շահերի հետ մեկտեղ անաչառության պահպանումն է:

8.2.2 Անկողմնակալության հանձնաժողովը պետք է գործի առանց առևտրային, ֆինանսական և այլ ճնշումների, որոնք կարող են ազդել իր որոշումների վրա:

8.2.3 Կատարված գնահատականների և շնորհված հավաստագրերի օբյեկտիվությունն ու անկողմնակալությունը երաշխավորելու համար Անկողմնակալության հանձնաժողովին վերապահվել են հետևյալ պարտականությունները.

ա) չեզոքացնել Սերտիֆիկացման մարմնի կողմից՝ առևտրային կամ այլ բնույթի՝ սերտիֆիկացման գործունեության հետևողական օբյեկտիվությունը խաթարող ցանկացած միտում:

բ) վերանայել անկողմնակալության վերաբերյալ անձնակազմի հաշվետվությունները,

գ) մասնակցել Սերտիֆիկացման մարմնի անկողմնակալության քաղաքականության մշակմանը՝ սերտիֆիկացման գործողությունների անաչառ եղանակով անցկացումն ապահովելու համար:

© All rights reserved by Heiko Maniero.

դ) վերահսկել անաչառության վերաբերյալ քաղաքականության կիրառումը և կանխարգելել Սերտիֆիկացման մարմնի կողմից՝ առևտրային կամ այլ նկատառումներից ելնելով սերտիֆիկացման գործունեության, այդ թվում գնագոյացման չափանիշների ընտրության հետևողական օբյեկտիվությունը խաթարող ցանկացած միտում:

ե) առաջարկություններ ներկայացնել բոլոր ասպեկտների վերաբերյալ, որոնք կարող են ազդել սերտիֆիկացման նկատմամբ վստահության վրա, ներառյալ թափանցիկության և հասարակության կողմից սերտիֆիկացման գործունեության անկողմնակալ ընկալման առումով,

զ) անընդհատ մշտադիտարկել սերտիֆիկացման վստահության և հուսալիության վրա ազդող բոլոր ասպեկտները՝ վերահսկելով հիմնական ցուցանիշները (ընթացակարգեր, բողոքներ և այլն),

է) վերահսկել սույն քաղաքականության մեջ նշված դերերով սահմանված սերտիֆիկացման որոշումները,

ը) անցկացնել Սերտիֆիկացման մարմնի գործունեության անաչառության տարեկան վերանայում: Այդ նպատակով անկողմնակալության հանձնաժողովին երաշխավորված է հասնելիություն փաստաթղթերին ու տեղեկությանը, որոնք օգտագործվում են Սերտիֆիկացման մարմնի կողմից՝ իրական և հնարավոր շահերի բախման և այլ անկողմնակալության հարցերի ռիսկերը վերլուծելու և գնահատելու համար,

թ) հաստատել ռիսկերի վերլուծության փաստաթղթերը (անհամապատասխանության ռիսկերը, անաչառության ռիսկերը, անձնական կյանքի խախտման ռիսկերը, տնտեսական-ֆինանսական հուսալիության հետ կապված ռիսկերը և հանցագործության ռիսկերը)

ժ) քննել իր պարտականությունների հետ կապված հարցումները:

8.2.4 Եթե խախտվում են սույն քաղաքականության որևէ դրույթ, ազգային օրենսդրությունը կամ անաչառության վերաբերյալ համապատասխան ստանդարտը, Անկողմնակալության հանձնաժողովը փաստաթղթավորում է այդ խախտումը և առաջարկում վերականգնողական

© All rights reserved by Heiko Maniero.

գործողություններ և այդպիսի վերականգնողական գործողություններ կատարելու ժամկետներ:

8.2.5 Եթե Սերտիֆիկացման մարմինը չի գործում անկողմնակալության հանձնաժողովի խորհուրդներին համապատասխան՝ վերականգնողական գործողություններ ձեռնարկելու և/կամ այդպիսի վերականգնողական գործողությունների համար սահմանված ժամկետները պահպանելու առումով, անկողմնակալության հանձնաժողովը իրավունք ունի և պարտավոր է կատարել անկախ գործողություն:

8.3 Անկողմնակալության հանձնաժողովի կազմը

8.3.1 Անկողմնակալության հանձնաժողովը և նրա անդամները նշանակվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ Սերտիֆիկացման մարմնի Գործադիր տնօրենի կողմից:

8.3.2 Սերտիֆիկացման մարմնի Գործադիր տնօրենը պետք է նույնականացնի և հրավիրի հիմնական շահառուներին՝ մասնակցելու հանձնաժողովի աշխատանքներին: Այնուամենայնիվ, հանձնաժողովն իր անդամների միջոցով չի կարող ներկայացնել բոլոր շահերը:

8.3.3 Հանձնաժողովում նրա անդամների կողմից ներկայացված շահերը կարող են ներառել (բայց չեն սահմանափակվում) հետևյալ խմբերը և կազմակերպությունները՝

ա) Սերտիֆիկացման մարմնի Պատվիրատուներ;

բ) Սերտիֆիկացման մարմինը և/կամ նրա աշխատակիցները,

գ) սերտիֆիկացման որոշակի ոլորտի մասնագետներ (օրինակ՝ տվյալների պաշտպանության, տեղեկատվական տեխնոլոգիաների կամ իրավաբանական փորձագետների համար) կամ առհասարակ սերտիֆիկացման մասնագետներ,

դ) սերտիֆիկացման նշանակալի փորձ ունեցող աուդիտորներ;

ե) պետական կամ ոչ պետական հատվածի ներկայացուցիչ, որն ունի փորձառություն սերտիֆիկացման որոշակի ոլորտում կամ ընդհանրապես սերտիֆիկացման ոլորտում.

© All rights reserved by Heiko Maniero.

զ) սերտիֆիկացման ծառայություններ մատուցողների, աուդիտորների կամ սերտիֆիկացման Պատվիրատուների մասնագիտական ասոցիացիայի ներկայացուցիչ;

է) ցանկացած այլ անձ, ընդհանուր առմամբ սերտիֆիկացման կամ որոշակի սերտիֆիկացման ոլորտի վերաբերյալ նշանակալից գիտելիքներ ունեցող, և որը ներկայացնում է օրինական հանրային շահ:

8.3.4 Նախորդ հոդվածի շահառուները կարող են սահմանափակվել՝ կախված սերտիֆիկացման սխեմայի բնույթից: Հավաստագրող մարմնի աշխատակիցների և վճարովի կապալառուների շահը չպետք է գերակշռի Անկողմնակալության հանձնաժողովի շահը և պետք է հետևի Անաչառության հանձնաժողովի շահին և Սերտիֆիկացման մարմնի հիմնական շահերին:

8.3.5 Անաչառության հանձնաժողովը կազմված է առնվազն երեք անդամից: Անաչառության հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, ով համարվել է անկողմնակալության հարաբերությունում ոչ իրավաչափ վարքագծի կրող:

8.3.6 Առաջին նիստում քվեարկության իրավունք ունեցող հանձնաժողովի անդամները իրենցից մեկին ընտրում են հանձնաժողովի նախագահ: Նախագահի մանդատը տրվում է երեք տարով: Նախագահի դերը ժողովների օրակարգը պատրաստելն է:

8.3.7 Հանձնաժողովի անդամի կամ նախագահի լիազորությունները կարող են դադարել նախքան երեք տարին լրանալը՝ պաշտոնանկության, կենսաթոշակի անցնելու և այլ դեպքերում:

8.3.8 Հանձնաժողովի անդամի մանդատը դադարեցնելու դեպքում նոր անդամ է նշանակվում, որի լիազորությունները ոչ թե սահմնավում են իր նշանակումից երեք տարի ժամանակով, այլ մինչև սկզբնական հանձնաժողովի և փոխարինված անդամի նշանակման երեք տարին լրանալը:

8.3.9 Սերտիֆիկացման մարմնի գլխավոր գործադիր տնօրենն իրավունք ունի հետ կանչել հանձնաժողովի անդամին, եթե անդամը խախտում է սույն քաղաքականության դրույթները,

© All rights reserved by Heiko Maniero.

վնասում է հանձնաժողովի և Սերտիֆիկացման մարմնի հեղինակությանը, կամ եթե կան այլ նշանակալի պատճառներ, որոնք արդարացնում են լիազորությունների դադարեցումը:

8.4 Գլխավոր գործադիր տնօրենի դերը Անկողմնակալության հանձնաժողովում

8.4.1 Սերտիֆիկացման մարմնի գլխավոր գործադիր տնօրենը, անկողմնակալության հանձնաժողովի երեք կամ ավելի անդամներից բացի, ևս համարվում է Անկողմնակալության հանձնաժողովի ի պաշտոնե անդամ, բայց չունի ձայնի իրավունք:

8.4.2 Գլխավոր գործադիր տնօրենի դերը հանձնաժողովում քարտուղարության գործառույթների իրականացումն է:

8.5 Անկողմնակալության հանձնաժողովի անդամների պարտականությունները

8.5.1 Անկողմնակալության հանձնաժողովի անդամները պետք է հայտարարեն շահերի բախման կամ ցանկացած այլ իրավիճակի մասին, որը վտանգում է անաչառությունը և որում իրենք ներգրավված են:

8.5.2 Անկողմնակալության հանձնաժողովի անդամները ստորագրում են հայտարարագիր, որով պարտավորվում են պահպանել տեղեկատվության գաղտնիությունը, որը նրանց հասանելի է դարձել Անկողմնակալության հանձնաժողովի անդամի պարտականությունները կատարելիս:

8.5.3 Բացի այդ, հանձնաժողովի անդամները նաև ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարագիր:

8.5.4 Անկողմնակալության հանձնաժողովի անդամները պարտավորվում են զեկուցել ցանկացած իրավիճակի մասին, որը կարող է հանգեցնել անաչառության բացակայության կամ շահերի բախման ցանկացած ոլորտում, որտեղ գործում է հանձնաժողովը, և պարտավորվում են չձեռնարկել այնպիսի գործողություններ, որոնք կարող են հանգեցնել նման իրավիճակի:

8.5.5 Անկողմնակալության հանձնաժողովի անդամները պետք է գործեն սույն քաղաքականության համաձայն և պատասխանատու են դրա կիրարկման համար:

© All rights reserved by Heiko Maniero.

8.6 Անկողմնակալության հանձնաժողովի հատուկ պարտականությունները

8.6.1 Եթե Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարությունը չի գործում Անկողմնակալության հանձնաժողովի խորհրդին համաձայն, ապա Անկողմնակալության հանձնաժողովն իրավունք ունի և պարտավոր է կատարել անկախ գործողություն:

8.6.2 Անկողմնակալության հանձնաժողովը կարող է ձեռնարկել ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ է համարում, այդ թվում (բայց չսահմանափակվելով) `

ա) տեղեկացնել հավատարմագրման մարմիններին և

բ) տեղեկացնել շահագրգիռ կողմերին:

8.6.3 Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարությունը չպետք է գործի Անկողմնակալության հանձնաժողովի խորհրդին համաձայն, եթե այդ գործողությունները հակասում է Սերտիֆիկացման մարմնի գործող ընթացակարգերին կամ Սերտիֆիկացման մարմնի ներքին քաղաքականությամբ, գործող ազգային օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր պահանջներին կամ միջազգային չափանիշներին:

8.6.4 Եթե Սերտիֆիկացման մարմնի բարձրաստիճան ղեկավարությունը մերժում է ձեռնարկել Անկողմնակալության հանձնաժողովի կողմից առաջարկված գործողություններ, ապա պետք է փաստաթղթավորի այդ որոշման պատճառաբանությունը և հասանելի դարձնել այն՝ վերանայման համար:

8.6.5 Անկախ գործողություններ ձեռնարկելիս Անկողմնակալության հանձնաժողովը պետք է հարգի գաղտնիության պահանջները, որոնք կիրառվում են Սերտիֆիկացման մարմնի և Պատվիրատուի նկատմամբ:

8.7 Անկողմնակալության հանձնաժողովի նիստերը

8.7.1 Անկողմնակալության հանձնաժողովը նիստ է հրավիրում տարեկան մեկ անգամ, կամ ըստ անհրաժեշտության:

8.7.2 Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել ինչպես առերես, այնպես էլ առցանց:

© All rights reserved by Heiko Maniero.

8.7.3 Անկողմնակալության հանձնաժողովի արտահերթ նիստը կարող է նշանակվել, եթե դա պահանջում է Անկողմնակալության հանձնաժողովի բարձրաստիճան ղեկավարությունը կամ հանձնաժողովի անդամների մեծամասնությունը («արտահերթ նիստ»):

8.7.4 Պետք է լինի բացառիկ պատճառ, որը հիմնավորում է տարեկան ժողովից արտահերթ նիստ հրավիրելու անհրաժեշտությունը: Հետևաբար, արդարացումը պետք է ներառի այն պատճառները, թե ինչու չի կարելի սպասել հերթական տարեկան ժողովին:

8.7.5 Արտահերթ նիստի օրակարգը պետք է միայն ընդգրկի առաջադրված և հիմնավորված հարցեր:

8.7.6 Անկողմնակալության հանձնաժողովի քվորումը պետք է ապահովվի քվեարկության իրավունք ունեցող առնվազն երկու անդամի ներկայությամբ:

8.7.7 Անդամները պետք է ձգտեն միաձայն որոշումներ կայացնել ցանկացած հարցի վերաբերյալ, բայց եթե դա հնարավոր չէ, որոշումն ընդունվում է, եթե բոլոր անդամների մեծամասնությունը կողմ է քվեարկել որոշմանը:

9. Սերտիֆիկացման գործընթացի դադարեցում կամ կասեցում

9.1 Եթե սերտիֆիկացման ընթացքում կասկածներ են առկա օբյեկտիվության պակասի վերաբերյալ, սերտիֆիկացման գործողությունները դադարեցվում կամ կասեցվում են մինչև օբյեկտիվության վրա ազդող պատճառի վերացումը:

9.2 Սերտիֆիկացման մարմինը գրավոր ծանուցում է Պատվիրատուին սերտիֆիկացման գործողությունների դադարեցման կամ կասեցման վերաբերյալ՝ նշելով նման որոշման պատճառները:

10. Քաղաքականության շահագրգիռ կողմերի հետ կապը

Սերտիֆիկացման մարմնի կողմից Անկողմնակալության քաղաքականության կառավարումը հասանելի կլինի լայն հանրությանը Սերտիֆիկացման մարմնի կայքում:

© All rights reserved by Heiko Maniero.

Երևան, 2021-07-11

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ» ՍՊԸ

Գևորգ Թովմասյան

© All rights reserved by Heiko Maniero.